

ԱԶԳԱՅԻՆ

Խմբագրութեան Արարատ Ամսագրի:

Խնդրում եմ հետևեալը տեղաւորէք ազգագուտ ամսագրիդ որ և է կջերում:

— Եղեքեան գտնվում է Մոզզով քաղաքից 35 վերստ հեռաւորութեամբ մի զառիվայր տեղում: Գիւղը բաղկացած է 500 տնից, բոլորը հայեր են և գաղթել են Ղուբայի և Դարբանդի նահանգներից խաների ժամանակներում 1797 թուականին: Եղեքեան գեղեցիկ տեսք ունի. արևելեան, հիւսիսային և արևմտեան հարաւային կողմերում տարածվում է ընդարձակ դաշտը, ուր ցանում են իւրաքանչիւր տարի հացահատիկներ: Ամենից աւելի հրապուրելի են խաղողի այգիների տեսքը և անտառները, որոնք նոյնպէս գտնվում են արևելեան հարաւային կողմերում:

Եղեքեանից պարապում են երկրագործութեամբ, այգեգործութեամբ, և մի մասն էլ մշակութեամբ: Բնակիչների կէս մասը միայն կարողանում է պարզ հայերէն խօսել, իսկ մնացեալը չգիտէ *): Սոքա շատ համեստ բնաւորութեան տէր են: Թէպէտ ուսումից զուրկ, բայց սիրով հետևում են իրանց զաւակների կրթութեանը: Ունին Ս. Աստուածածնայ անուամբ մի եկեղեցի գիւղի կեդրոնում և երկու քահանայ:

Եկեղեցուն մերձ արևելեան հարաւային կողմում գտնվում է Հոգևոր Ծխական - Դպրոցը: Դպրոցի հարաւային կողմում գտնվում է ուսուցչի բնակարանը, որ շինել է իւր արդար վաստակով Եղեքեանի ա. Եղիազար Յոնանեան Վլասեանցը, որ Դպրոցում 12 տարի վարել է հոգաբարձուի պաշտօն, իւր անձնուէր ծառայութեան համար պ. Վլասեանը ստացել է Հանգուցեալ Տէր Գէորգ Դ. Աթոռիկոսից օրհնութեան կոնդակ, իսկ Հանգուցեալ ի Տէր Ռուսաց ՎայսրԱլիքսանդր Նիկողայեվիչից մի արծաթեայ մեդալ:

Դպրոցը բաղկացած է մի դասարանից և երեք բաժանմունքից. յիշեալ Դպրոցի մէջ ուսանում են 50-ի չափ աշակերտներ Հայոց և Ռուսաց լեզուներ: Պէտք է խոստովանել, որ Դպրոցը փոքր է, և թէպէտ ամէնքը ցանկութիւն ունին իրանց որդւոցը Դպրոց ուղարկել, սակայն դպրոցում տեղ չը լինելու պատճառով՝ զուրկ են մնում **): այդ իսկ պատճառով էլ խեղճ ծնողների եռանդը պաղել է: Յիշեալ Դպրոցով կառավարուել են 1866 թուականից մինչև այսօր. շատերը յուսահատ մնալով իրանց զաւակները չընդունուելուն համար, Այսպիսի յուսահատ գրութիւններից յետոյ, վերջապէս Եղեքեանց բաղը

(*) Հայերէն չիմացողները համարեա բոլորը հոսակաւոր մարդիկ եւ կանայքն են. իսկ երիտասարդները շատերը խօսում են պարզ հայերէն: Ման. Յօդ.

(**) 500-տնից ամենափոքունը 100 կամ 150 աշակերտ կարելի է ժողովել, միայն եթէ Դպրոցը ընդարձակ եւ մի քանի դասարաններից բաղկացած լինէր. դորա համար էլ շատ մանուկներ ուսումից զուրկ մնալով, անցուցանում են իրանց թանկ ժամանակը փողոցների մէջ մանկական խաղերով: Ման. Յօդ.

բացուեց, Անցեալ 1883 թուականի Սեպտեմբերի 23-ին Աստրախանի թեմի կառավարիչ գերապատիւ Սրբազան Սուբիաս Եպիսկոպոս Պարգեանը, իր վիճակը այցելելու ժամանակ, ի միջի այլոց այցելեց նաև Եգեսիային, Եկեղեցական կարևոր գործերը կարգադրելուց յետոյ այցելեց նաև Գպրոցին, աշակերտներին մի քանի հարցեր առաջարկելուց յետոյ, գոհ սրտով գնաց իւր իջևանը, Երեկոյեան հասարակական ժողով կազմեց և ազգու խօսքերով հասկացրեց նոցա Գպրոցի բարձր նշանակութիւնը և յորդորեց, գպրոցը ընդարձակել, Սրբազան Հօրը ճանապարհելուց յետոյ յարգելի ժողովրդականքը անմոռաց մնալով իրանց խոստման՝ հասարակական ժողով կազմելով պ. Կարապետ Եղիազարեանին և պ. Բարդուղիմէոս Սուբեասեանին ընտրեցին Գպրոցի շինութեան հոգաբարձու, Ապա որոշեցին ամենքի համաձայնութեամբ կալերի ժամանակ ցորեան և կորեկ ժողովել ի նպաստ գպրոցի շինութեան, Յուցակ կազմելով յանձնեցին յիշեալ երկու պարոններին անյապաղ ժողովելու, Եւ վերոյիշեալ պարոնները ամեն ջանք և աշխատութիւն գործ գնելով ժողովեցին 250 մերկայ ցորեան, սկսել են ժողովել կորեկը. կորեկն էլ յոյս կայ 500 մերկայ ժողովելու, Յիշեալ արդիւնքները ժողովելուց յետոյ, որպէս բարենպաստակ մի նուէրք պիտի հանգանակեն դրամ այն անձինքներից, որոնք երկրագործութեամբ չեն պարապում, բայց ունին կարողութիւն. այդպիսի կարող անձինքներից էլ կը ժողովուի 100 ռուբլու չափ դրամ, ի վերջոյ իւրաքանչիւր արօրատերից դարձեալ 4-ական ռուբլի, բոլոր արօրների թիւը հասնում է 67-ի. ուրեմն յիշեալ 67 ը արօրներից ստանալու գումարը կըլինի 268 ռուբլի վերոյիշեալ կամաւոր նուէրները ժողովելուց յետոյ, ի հարկէ կը գտնուեն այնպիսի բարեպաշտ անձինք ևս, որոնք իրանց կողմից Գպրոցի շինութեան ժամանակին դաւձեալ կընծայեն իրանց կողմից իւրեւ կամաւոր նուէր:

Բոլոր նուէրները հաշուելով՝ յոյս կայ 8 կամ 900 ռուբլի գումարել, եթէ չեմ սխալվում 1000 ռուբլի էլ կը գոյանայ, եթէ յիշեալ գումարով չը կարողանան Եգեսիացիք մի օրինաւոր Գպրոց գլուխ բերել. այնուհետեւ ցանկալի կըլինէր որ Եկեղեցական գումարից ևս 1000 ռուբլի նշանակէր նորին Սրբազնութիւնը, որով վերջին գումարը միացնելով առաջնի հետ շատ հեշտութեամբ կարելի էր լրացնել բոլոր ծախքերը, Եգեսիացիք յուսով են որ նորին Սրբազնութիւնը կը կատարէ այս հանրագումար խնդիրը եթէ իրան (Սրբազան Հօրը) գիմելու լինեն առանձին խնդրագրութեամբ:

Ի վերջոյ յոյս կայ առաջիկայ 1885 թուականի Մարտ և Ապրիլ ամիսներում տեսնել նոր Գպրոցի հիմնադրութիւնը Եկեղեցու սրահի մէջ մի յարմարաւոր տեղում: Տա՛յ Աստուած յաջողութեամբ կատարուի Եգեսիացուց ի վաղուց ցանկացած գովելի փափազը:

Հայրապետ Եղիազարեան Ալասեանց